Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ Երևանի «Երևանի Հ.174 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի ուսուցչի (20 դասաժամ) թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է(Ձև1):
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ փաստաթուղթ (դիպլոմ):
3. Անձնագրի պատճենը:
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում:
5. Ինքնակենսագրություն (Ձև5):
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի:
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում):
10. Որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են հունիսի 8-ից հունիսի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի կիրակի օրվանից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա հունիսի 24-ին՝ ժամը 10^{00}-ին, Երևանի հ.174 հիմնական դպրոցում:

Հասցեն՝ ք. Երևան Ա-1թաղամաս, Սվաճյան 42:

Տեղեկությունների համար զանգահարել (010) 73-34-40 հեռախոսահամարով: